

ԱՐՏԵՆԻՒ

Գառնի, 4 Մայիս:

Ն. Վեհափառութիւն Սարգիսի Թագաւորը՝ բաղձալով ցըցնել իր մեծ սէրը և պաշտպանութիւնը իր ժողովուրդին բարոյական և ուսումնական յառաջադիմութեանը վրայ, մօտեցաւ հրամայեց որ նոր դպրատուն մը շինելի Գառնին քաղաքը՝ փառաւոր շէնքով, գաւազակաճիւղերուն համար: Ստորագրեց, թէ երբ որ մէկ երկրի մը մեծամեծները նորանոր դպրատուներ հաստատելու ու ամէն կերպ ուսմանը և գիտութիւնները առաջ տանելու փափաք ունին, ամենեւին տարակոյս մը չի կայ որ նոյն երկիրը կամ քաղաքը լուսաւորեալ է, տգիտութեան խաւարը բոլորովին հալածական եղած է անկէջ:

ԶՄԻՌՆԻՒ

Հունիս, 5:

Այլալուիէն կը գրեն մայիս 22 թիւով:

Երէկ չէ առջև օրը (սոմանեան կառավարութեանը կողմէն մէկ Փրէկադ մը եկաւ 500 զօրով՝ որուն մէջն էր նաև թէվֆիք պէյը: Ենթադրաբար աս Փրէկաթը համեմէն ետև բռնաբեկեցան անցած ամսուն ժողովրդոյ մէջ ելած խռովութիւններուն գլխաւորապէս պատճառ եղող անձինքները: Աս խռովարարները (սոմանեան պատերազմի պոլիքի մը մէջ զրկելով կոստանդնուպոլիս խրկուեցան: Այժմ կատարեալ խաղաղութիւն մը կը տիրէ քաղաքիս մէջը:

Երբորդ ծովապետ Պարոն Պանտիէրան աւտորիացոյ արևելեան կողմը գտնուող նաւերուն հրամանատարը, մայիս 23 ին հասաւ հոս, որ անցած ներք Վէնէն անուն Փրէկաթով պարտուելու ելած էր Մարտիստանի կողմերը և Մըշիպէղադոսի մէջ:

— Հոնաց պատերազմի փոքրիկ նաւ մը Վէտի Վարրինկթօն անուն, որ քանի մը ատենէ ՚ի վեր աս ջուրերը կը պարտուէր, երէկ չէ առջև օրը հասաւ հոս: Աս նաւուն մէջ բռնաբաժ կը կենայ մէկ նաւապետ մը իր նաւաստիներուն հետ, վաճառականի ապրանք յափշտակելու յանցանքով ամբաստանված: Վէտի Վարրինկթօն քանի մը օրէն պիտի մեկնի որ երթայ Սիրայի կառավարութեանը յանձնէ յիշեալ անձինքը:

Փրէս անունով օրագրութեանը մէջ կը կարգացուի հետևեալ լուրը Չինաստանի վրայով:

«Նիզղիացոյ նաւատորմիդը՝ մօտեցաւ Եօթը չիւնացի վաճառականի նաւ բռնեց զանազան ապրանքներով լեցուն, ու Հօնկ Վօնկ քաղաքի նաւահանգիստը բերաւ»:

Նիզղիական օրագրութիւնները կը ծանուցանեն թէ սըր Հ. Փօղինճըր, որու յանձնարած է հիմակ պատերազմին կառավարութիւնը, հաստատու միտքը դրած է փէթին քաղաքը տիրելու, ու ստիպելու զկայսրը որ Նիզղիայի կառավարութեան պահանջ մոնքները ընդունի: Կը հաստատեն նաև, թէ ա-

Փիօնի առուտուրը օր լաւ օրէ առաջ երթալու վրայ է: Թէպէտ անունով օրագիրը կըսէ թէ ծովագիւղաց տեղւոյնքը համարձակ աֆիօն կը ծախեն, Նիզղիացիք ամենեւին մոռնի չեն ընել կառավարութեան ընդգիմութիւնը: Եւ թէ այնքան շահաւոր զինելով կը ծախեն, որ արդէն հոգ տարած են, որ աֆիօն ունեցող նաւերը յամաքի մօտ՝ զանազան տեղւոյնք կէնան, որպէս զի զիւրութիւն մը ըլլայ այս ապրանքը վաճառելու:

— Գլուխ (Կարեյուսոյ կոչած) Էրուանդանին օրագիրները կը ծանուցանեն, թէ պալէնայի որսորդ Նիզղիացի մը նոր կղզիներ գտած է Խաղաղական Ովկիանոսի մէջ, որոնց համար ինչպէս հիմայ ամենեւին ծանօթութիւն ունեցող մը չի կար: Աւթը կղզի է, կըսեն, աս նոր գտնուածները, որոնք բաւական ընդարձակութիւն ունին. երկիրը ստորաբեր է, բայց բնակիչները սակաւաթիւ են:

Ֆուանքֆօրդի օրագիրները Միսուրիի մեծ կրակին վրայով մանրամասն տեղեւութիւններ տալով կըսեն, թէ հասարակօրէն այնպէս կը կարծւրի որ անգղիացիները և սպանիացիները ձգած են այս կրակը: Աս ալ կըսեն, թէ բազմաթիւ ժողովուրդ յետին խղճութեան մէջ մնալով՝ բիչ մնաց որ ապրտաւթութիւն մը պիտի ծագէր քաղաքին մէջը բայց կառավարութիւնը խոհեմութիւն բանեցընելով շուտով հանդարտեցուց զանոնք:

Ինչ քաղաքի (Վաստիա) օրագիրը կը ծանուցանէ թէ սոսկալի հրդէհ մը պատահեց է անցած ամիսու սկիզբները Սիէյէր քաղաքին մէջ, որ չորս ժամու մէջ մոխիր դարձուցեր է 250 տուն ու զրեւ թէ 3000 անձինք յիշեալ տներուն բնակիչները, իրենց ամմէն ունեցածները՝ կորսնցունելով թշուառ վիճակի մը մէջ ընկեր են:

ԱՆՆՈՒՄ

Գրամանոցին Օմիւռնիոյ:

Սահմանադրութիւն

Հօդաւած. 1:

Նշանուն ընկերութիւն մը հաստատուած է (քաղաքիս մէջ), որ կըսի Գրամանոց Օմիւռնիոյ:

Հօդ. 2:

Աս ընկերութիւնը հինգ տարի պիտի քէ, 2 մայիս 1842էն սկսեալ՝ ինչպէս 2 մայիս 1847: Թէ որ ասկէջ մինչև ան ատենը յառաջադիմութիւն մը չունենայ նէ ընկերութիւնը պիտի վերջացնէ իր գործողութիւնները 2 մայիս 1847, ու պիտի սկսի անոր հաշիւները տեսնելու:

Հօդ. 3:

Ընդհանուր ժողովը ստորագրող անձանց, կընայ վերջացնելու ընկերութիւնը՝ նախընթաց յօդաւածով սահմանաւ ժամանակէն առաջ, թէ որ վնաս կրէ, ու ընկերութեան գրամագլուխը հարուրին հօթանասունը հնգի իջնայ:

Հօդ. 4:

Արբ որ ընկերութիւնը լուծուիլու ըլլայ նէ, ընդհա-

նուր ժողովը իրեք կամ հինգ անձինք պիտի որոշէ հաշիւները կարգի դնելու համար:

Հօդ. 5:

Ինչ վեճ պատահելու որ ըլլայ ընկերութեան և ստորագրողներէն մէկուն հետ, կամ ընկերութեան և մասնաւոր անձի մը հետ, Գրամանոցի վերաբերեալ գործքերուն վրայով, միջնորդ դատարանները (արպիդրօ) պիտի վճռեն զայն: Կաղզիայի առևտրական օրէնքներուն կարգադրութեանը համեմատ. ու անոնց վճիռը անբողքելի պիտի ըլլայ:

Հօդ. 6:

Մենեւին կողմնասիրութիւն չընէ պիտի Գրամանոցը, թէ իր ստորագրողներուն և թէ ուրիշներուն:

Հօդ. 7:

Ընկերութիւնը տեղւոյ կառավարութեանը հետ ունեցած գործքերուն պաշտպանութիւնը, Խղմիրու Շվէտի հիւպատոսարանին խնամոցը կը յանձնէ:

Հօդ. 8:

Ընկերութեանը այս պայմանագրին մէկ օրինակն ալ, ստորագրութիւնները հաստատել տալով ըստ օրինաց՝ Շվէտի դիւանատանը (քանչէրիան յանձնեցինք, ընդհանուր ժողովոյն վաւերական յայտարարութեամբ, որ կը հաստատէ թէ ստորագրող ընկերները ամբողջ տրւած են Գրամանոցին՝ իրենց վճարելի ստակը:

Գործը:

Հօդ. 9:

Գրամանոցի ընկերութիւնը կը վարէ իր պաշտօնը միանգամայն աւանդ (բէհիւն) անելով, զրամ տալով և «սքօնդ» ընելով. փոխ ստակ կուտայ մօրհակաւ կամ ապրանք աւանդ առնելով տեղը, առկապակի «քաւիէուի» պէս առևտրական պայմանագրութիւններուն դիւրութիւն տրուող ամմէն կերպ գործքերուն ձեռք կը զարնէ:

Հօդ. 10:

Գրամանոցը շահով ստակ կընդունի, բերողին մօրհակ մը տալով. ըրեալի համար՝ տարին 100 ին 5 հատուցանելով, ու (սոմանեան ստակի) 100 ին 8:

Ընկերութեան ընդհանուր ժողովը կընայ այս շահը փոխելու. բայց անցածին համար ընաւ փոփոխութիւն չըլլար:

Հօդ. 11:

Շահը՝ որով Գրամանոցը փոխ ստակ կուտայ փոխանակագիրներու և տոմսակներու «սքօնդ» կընէ, ու «բէհիւն» գրած ապրանքներէն կառնէ, կըսլայլիլ պարգաններուն և ստակի զիններուն փոփոխութեանը համեմատ. բայց իր առած գրամը՝ շարունակ վեց ամիսէն է վիճի ժամանակ չի պահեր, ու մինակ իրեք ամիսան համար փոխ ստակ կուտայ:

Հօդ. 12:

Վճարելու որոշ ատեն ունեցող թղթերը «սքօնդ» կընէ:

Հօդ. 13:

Ընկերութեան տրւած տոմսակները՝ հատուցանելի են առ օրին, կամ 7, 15 և 21 օր պայմանաժամով. բայց ասանկ տոմսակներ կուտայ, իր ունեցած գրամագլուխին կէս դուստրին չափ և ոչ էլիելի:

Հիշեալ տոմսակները ստորագրած են ընդհանուր ժողովոյ անդամներէն և արկղապետէն:

Հօդ. 14:

Գրամանոցը կամ պատրաստ գրամ կը վճարէ և կամ իր ունեցած տոմսակները, ինչպէս որ կը կամի նէ փոխ

ուղղորդ. նմանապէս դրամ կամ ընկերութեան սոմանակ-
ներէն կընդունին իր սոմանակներն տեղը :

Ընկերութեան դրամագլուխը :

§ 15 :

Ընկերութեան դրամագլուխը՝ հարկեր հազար սիւ-
նադրոշմ դաճեկան է . մէկ բաժինը հարկեր սիւնադրոշմ
դաճեկան . որուն կէսը պիտի վճարուի 2 մայիսի (լսա-
նացոյց) 1842, և մնացածը՝ Վրամանոցի կառավարչին
յայտարարութիւնը ընդունելէն ետքը օր ետքը :

§ 16 :

Եւրամանակ մը ետեւ , թէ որ ընկերութիւնը պատշաճ
համարի նէ , իր դրամագլուխը պիտի կէլեցընէ . հի-
մակընէ իշխանութիւն ունենալով աս նորէն կ'ըլլայու-
ցած բաժինները իր հաշիւին սեպիւ , կամ թէ ուրիշ նոր
ընկերութիւն տալ :

§ 17 :

Թէ որ ձախորդութիւն մը պատահելու ըլլայ ընկե-
րութեան , բաժին ունեցող ընկերները մինակ իրենց
գրած դրամագլուխը կըկորսնցունեն :

§ 18 :

Եւ ընկերութեան գրողներէն ո՛վ որ ուզէ կրնայ իր
բաժինը ուրիշ մը տալ :

§ 19 :

Թէ որ ընկերներէն մէկը կամ ուրիշ մը որ ընկերու-
թեանը հետ գործառնութիւն ունի , սնանկանալու ըլ-
լայ , Վրամանոցի իրաւունքները պիտի կորստագրուի իր
վերջի հաշիւին համեմատ :

Եւսանկ պիտի ըլլայ նաեւ թէ որ ընկերներէն մէկը
մեռնի :

Բաժին :

§ 20 :

Բաժին ունեցող ընկերներուն տըրեւելութեանը մեծ
ժողովոյ անգամները պիտի ստորագրեն . ու երբոր առա-
ջին 1/2 գումարը հաստացանելու ըլլան , ան ստանը տալու
են ունենց :

Եւս վճարումը պիտի նշանակեն յիշեալ թղթին մէջ
Վրամանոցի կառավարչի և արկղապետը :

§ 21 :

Ընկերներէն մէկը իր բաժինը ուրիշ վրայ "տէվր" ընե-
լու համար , պէտք է որ յայտարարութիւն մը ընէ իր
ստորագրութեամբ . և որու որ կուտայ նէ , այն անձին
կամ անոր փոխանորդին անունն ալ յիշատակէ :

Յիշեալ յայտարարութիւնը Վրամանոցի գիւմանը պի-
տի գրվի ստորագրութեամբ Մ . Ն . Վրամանի , ընկե-
րութեան կառավարչին : Եւս փոփոխութիւնը պիտի նը-
շանակեն նաեւ նոյն անձինք՝ բաժանորդէն տըրեւելու
թղթին վրայ ալ :

§ 22 :

Վրամանոցը հարկերին 1/2 կառնէ , մէկուն բաժինը
ուրիշին վրան անցնելու համար :

Հաշիւները :

§ 23 :

Բոլոր հաշիւները կըկատարուին կանոնով պիտի
ըլլան ու գաղղիարէն ընդով գրուելու են :

§ 24 :

Վրամանոցը՝ վեց ամիսը անգամ մը պիտի փակէ իր
հաշիւները , սիւնադրոշմ դաճեկանի վրայ ընկելով միշտ

իր ամսէն հաշիւները) ու կշիւը ընկէն ետեւ , ընկերու-
թեան ընդհանուր ժողովոյն պիտի յանձնէ զայն :

Եւս շահ որ կըլէ կշիւէն , Վրամանոցի կառավարու-
թեան համար հարկաւ որ կըած բոլոր ծախքերը հանելէն
ետեւ , մնացած շահէն հարկերին 10 (կառավարչին աշխա-
տութեանը փոխարէն արըւելու , և իր ունեցած իրաւունք-
ներէն 'ի դատ) պիտի առնուի ուրիշ մասնաւոր արկղ մը
հաստատուելու որ և թէ վնաս մը պատահի նէ ընկերու-
թեանը , անկէց օգնութիւն ըլլայ իրեն :

(մնացորդը հսկակալ թիւով) :



Եւս թիւանք բարեխառնութեան Գլխաւոր , գիտեալ
'ի միջօրէի և եղեալ ըստ բաժանման Վստմուրի :

		Դատուերի :		Հարեու :	
Ուրբաթ	29 մայիս	+	21 1/2	աստիճան	26 աս
Շաբաթ	30 "	+	20 "		25 1/2 "
Կիրակի	31 "	+	21 1/4 "		27 "
Եւսնիս					
Կրկուշաբաթի	1 "	+	20 "		25 "
Կրեքշաբաթի	2 "	+	19 1/2 "		25 1/4 "
Չորեքշաբաթի	3 "	+	19 3/4 "		25 1/2 "
Հինգշաբաթի	4 "	+	21 "		26 "

Պատմութիւն

Աշխարհիս մէջ անանկ մարդիկ կըգտնուին , ո-
րոնք հոկաւաւ բազմ մը ունենալով՝ ինչ որ ընեն նէ
իրենց կամոցը գէտ կըլլայ . ահա ասոնցմէ մէկուն
պատմութիւնը հոս կըգտնենք ընթերցողներուն զը-
ւարձութեանը համար :

Եւսյած դարուն մէջը հանդիպեցաւ որ մարդուն
մէկը երեւել խաթունի մը տուն գնաց իր մէկ բարե-
կամին հետ փխպպոս անունով , որ դէս նոր ելած էր
դպրատունէն : Եւս երիտասարդը պարկիշտ ու սրա-
միտ կերեար , բայց չափէն գուրս ամբողջութեամբ
թիւն մը ունէր : Եւս որովհետեւ խաթունին տունը
կըթող վրէկէն ամսէն իրիկուն այն քաղքի երեւելի
տիկինները ու պատուաւոր երիտասարդները ուրա-
խութեամբ անցունելու համար ժամանակին , ասոնց
ժողովքը բաւական երկիւղ մը պատճառեց անոր :
Եւսոր ներս կըմտնայ՝ առջի քայլը փոխելուն ան-
դգուշութեամբ կօշիկին բեւեւը կարպետին կըմխի ,
ու կարպիլէ առաջ երթալու . ջանք կընէ որ ոտքը
անկէց հանէ , ու տակնուվրայ ընելով բոլոր աթու-
նէրը , հետը կըքաշուանէ կրտանի կարպետը : Եւս
սանկ կը մօտենայ խաթունին և բարեւելու ատենը
կըսահի ոտքը ու վրան կիյնի : Բողոքութիւն շնորհէ՝
կըսէ կըլալով , ներուճն կըխնդրէմ : Բանմը չէ ,
(պատասխանեց խաթունը մեծ դժուարութեամբ ,
վրան զի ծիծաղելէն չէր կրնար զսպել զինքը) բան
մը չէ : Եւս ասանկերը կուգան իսկոյն կը շտկին կար-
պետը , աթու մը կուտան որ նստի , բայց անիկա
կըհրաժարի չուղէր նստիլ : Բարեկամը տեսնալով
փխպպոսին աչքերը դարձած , կըյորդորէ որ նստի .
վերջապէս տեղ մը կըգտնայ ու չիտեսնալով՝ խա-
թունին կիթաւին վրան կընստի ու կտորկտոր կընէ :
'Նորէն կըլլայ տեղէն մեծ վախով ու կընետուի
աթուի մը վրայ որ սենեկին մէկ անկիւնը զրոծ
էր . հոն տեղ պզտիկ շուն մը կը քնանար . չի տես-

նար դան վրան կիյնի . խեղճ կենդանին կըլլայ ու
ցաւուն կըսկսի պուսալ կանչ վրուտել : Եւս չեղաւ
խեղճ Պէղգուչ չիան (աս էր շունին անունը) կանչեց
խաթունը . . . ո՛վ դպաւ անոր ատանկ անքաղաքա-
վարութեամբ . . . Պէղգուչ չիան ձանը չիկտրելով
կըվընկվընկայ . փխպպոս մեծ շփոթութեան մէջ ին-
կաւ անստենը . չէր գիտեր ինչ ընէ : Վերջապէս
կըմտածէ լուութեամբ մը անկէց գուրս ելալու եր-
թալ իր բանը : Բայց շտապաւ գուրս ելալու ատե-
նը՝ չի տեսնար ծառան , որ ձեռքը չիքօղթի ու
խահվէի ամանով մը ներս կըմտնար ընկերութեանը
մատուցանելու համար , ու անանկ սաստիկ կըզար-
նուի անոր , որ ձեռքի ամանները ու ըմպանակները
կիյնան , մէջի եղածները կըթափին : Եւս Պէղգուչն
ըուն մէկ մասը սկսան սաստիկ ծիծաղել աս բանիս
վրայ , ու մէկ մասը սաստիկ բարկանալ . վրան զի
այն եւացած խմելիքներէն՝ որուն ոտքը էրած էր ,
որուն լաթերը աղտոտած էր . ու բաժանելուն
կտորելիլն ալ տանը խաթունը տեսնալով շատ կը-
նեղանար : Եւս միջոցիս երբոր փխպպոս վար կիջ-
նար սաստիկ արագութեամբ , խաթունին էրկանը
կըհանդիպի , ու հրելով զանիկա երեսի վրայ կըծը-
գէ : Խեղճ մարդը կարծելով թէ գող մտեր է
իր տունը՝ կըպուսայ բարձր ձայնով , թէ հասէք ,
բռնեցէք . . . : Եւս ձայնը լսելով ծառաները կը-
վազեն կուգան , որոնք պատմելով իրենց տիրոջը
երիտասարդին դժբաղդութիւնները , անանկ ծի-
ծաղցողին որ մուցաւ իր թիւին ու սրունքին ցա-
ւը . . . :

Հոս տեղս կըլլմայ պատմութիւնը . անկէց ետքը
չիմացվեցաւ թէ ինչ եղաւ խեղճ փխպպոս , որն
որ ինծի կերեալ թէ սաստիկ վախնալուն՝ դեռ
փախչելու վրայ է . . . :

ԼՈՒԵԻՏՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԳԱՂՂԻՒՆ

Մարտիկա , 20) Մայիս :

Բանալակ : Վրանի մը օր է որ Լիվրբուրն և
Հալլէն առած լուրերնիս յաջողակ են աս առաւ-
տուրին վրայոք . առ հասարակ ամսին տեսակ
բանալակի զինները հարկերին հինգէն ինչւան ութը
բարձրացած են . թէ որ աս յաջողակ լուրերը յիշ-
եալ առաւտրական քաղաքներուն մէջ շարունակե-
լու ըլլան , կըյուսացուի որ հոս ալ բարի փոփոխու-
թիւն մը ըլլայ բանալակի առաւտուրին , մանաւանդ
Լիվրբուր բանալակներուն , որոնց զինները հիմակու-
հիմայ շատ ցած են և շատ քիչ ծախս կըլլայ :

Մայիս 20 էն ինչւան 27 , մէկ շաբթուան մէջ
մինակ 66 պալեա Լիվրբուր բանալակ ծախվեցաւ .

28 Սոպուճայի բանալակ 70 1/2 ֆ . կէս քիլօկրա-
մը , հարկերին 2 վար իջեցընելով :

32 Վրքաղաճի 65 1/2

6 Խասապայի 72

Վաղաքիս մէջը և Լազարէթը գտնուած ամսին
տեսակ բանալակներու բոլոր գումարն է , ինչւան 31
Մայիսի , 33,974 պալեա . որոնցմէ 2000 պալեա
Լիվրբուր բանալակ է :

Հալլ զոնրված բանալակի գումարն է , 140 , 000

պարեա, աս շարժման եղած ծախսէն չի դատ, որ
է11:474 պարեա :

Զեթ : Հիմնական հիմն անշարժութեան մէջ է,
ինչպէս նախընթաց թիւով աս բանիս պատճառը
ծանուցինք. անանկ կը յուսացնի որ եթէ քիչ մը
առեւն ձեռք բեռնաւորած նաւ չի գայ նէ, աս ապ-
րանքը կրկին տուի շարժումը պիտի ստանայ :

Սուսամ : Ըստ ասոր քանի որ միշտ հաստատ է,
վասն զի պատրաստ սուսամ քիչ կը գործընդհանրուի
աս օրերս ծախվեցաւ 2000 քիւլէ, կէսը պատրաստ
ապրանք՝ և կէսը յուլիս ամսու մէջ աւանդելու
պայմանով. 55 Ֆր. 100 քիւլերամբ. հարկերին 1 1/2
վար իջեցնելով. ու 1848 տարին ամէն իրեք
ամիսներուն մէջ աւանդելու ապրանքը աւանդ կը
գործընդհանրուի, 50 Ֆր. քիւլերամբ. հարկերին 1 վար ի-
ջեցնելով :

Մետաքս : Ըստ եթէ նախկին մէջ բաւական ծախս
եղաւ ամսին տեսակներէն, մանաւանդ Պարսկաս-
տանի մետաքսը. որոնց գիններուն հիմնական փոփո-
խութիւնը եղաւ .

38 պարեա Պարսկաստանի մետաքս ծախվեցաւ	քիւլ	Ֆր. 12 : 15 1/2
14 " Սէլանիկի		13 :
8 " Պրուսայի փոքր խալան		17 1/2
3 " Մէշուուր		19 . 20 1/2
3 " Լու մեծ խալան		17—18
4 " Պարսկաստանի		13 1/2

Ղէհրի կեանքի : Մեծ անշարժութեան մէջ
է. աս շարժման ամենեւին չի ծախվեցաւ, ոչ նոր
ապրանքէն և ոչ հին ապրանքէն. որոնց չի ծախվի-
լը շատ վնաս կուտայ, մանաւանդ թէ նոր ճէհրին
եղելու ժամանակը մօտ է. և ինչպէս կը կարծուի
հասարակօրէն, յիշեալ ապրանքին նոր հունձը ա-
ռատ ըլլալու է : Բարձրագին մէջ ամսին տեսակ
ճէհրներէն թէ հին թէ նոր, շատ ապրանք կան
միջերանոցները, որոնց գինները միայն անուկուկ են :

ամենեւին աւելող չի կայ : Ֆր. 1 . 25 էն 1 . 50
մանր ապրանքներուն կէս քիւլ . Ֆր. 1 . 75—2
75 խոշոր ճէհրին. ու Ֆր. 3 նոր և անարատ
ճէհրին հարկերին 4 կամ 5 վար իջեցնելով :

Գիտոր : Լազարեթը գտնուած սե ու կանաչ
գիտորները, որոնք որ քաղաքը չի մտած ծախել
էին շահաւոր գիններով, աս օրերս անոնց քարանդի-
նան լինցաւ, ու ծախու աւելող վաճառականներուն
աւանդեցին : Բայց աս ապրանքը կրկին անշար-
ժութեան մէջ ընկաւ. ստոյգ է որ սե և կանաչ
գիտորը Լազարեթում որն որ կուգի էր, բնաւ չի
մնաց միջերանոցները, ու միայն կուտանդնուպօլսէ
եկածները կը գործընդհանրուի, բայց ուղած գիններին որ
է 80 Ֆր. 50 քիւլ . չեն կրնար գտնաւ. վասն զի
ապրանքին տեսակը գիններուն արժանաւորութիւնը
չունի :

Ցորեն : Ըստ շարժման աւելի առուտուր եղաւ աս
ապրանքէն, վասն զի Լնդլիայի յանձնարարու-
թիւնները ցորենի համար կը շարունակեն միշտ. ա-
սոր համար որքան ցորեն որ կար նաւերուն մէջը
բոլորը ծախու աւելի. նմանապէս սպասուած նաւե-
րուն ցորեններն ալ, ու միջերանոցները գտնուած
ցորեններէն ալ բաւական ապրանք վաճառեցին ամ-
մենն իւր Լնդլիայի համար :

ՏԱՆԿԱՏԵԱՆ

ՉԱՐՈՒՄԵՐ

5 Յունիս :

Բարձր քիւս օրու տուրը թէպէտ և մի և նոյն անշար-
ժութեան մէջ մնացած է, բայց եւրոպայի առևտու-
րական լուրերը քիչ մը յաջողակ ըլլալով հիմակ և
նոր ապրանքներուն հունձի ժամանակը մօտենալով
կը յուսանք որ այսուհետեւ առևտուրները սկսին
շարժիլ : Ըստ շարժման, երկու հազար չէքի
նոր աֆիօնի ծախս մը եղաւ չէքին 50 զուրուշէն

մինչև 610 ր աւանդելու պայմանով. դրամին կէսը կան-
խիկ վճարելին և մնացած կէսը ապրանքը աւան-
դելու ժամանակը պիտի տան, հին աֆիօնէն մէկ
քանի սեփեթ ծախվեցաւ չէքին 59 զուրուշէն :

Բամպակ : Ըստ ապրանքը 180 զուրուշէն ինչպէս
212 զուրուշէն քստ տեսակին կը ծախվի. քաղաքիս
մէջը շատ ապրանք չունինք հաղիւ թէ 2000 պարսկայ
կը գործընդհանրուի, և դրամէն ալ շատ քիչ կուգայ. հա-
ւանական է որ յիշեալ գինները հարկերին 4 կամ 5
բարձրանան :

Զեթ : Գործադրողներու վերաբերեալ խափանը
190, կամ 192 զուրուշէն կը ծախվի խանթարը, բայց
ուտուր եղը 200 զուրուշէն է :

Առանցքներ գինը ինչպէս որ կուտան և կըն-
դունին հիմակ ֆուանկայ թաղը, հարկերին 5 քս-
քօնք ընելով ողջ դրամի տեղ, թէ փոխանակա-
գիրներու և թէ ապրանքի համար :

Տերէկի ըրեալ	զուրուշէն	26 1/2
Չէքի	"	25 1/2
Շիշի	"	25
Սոկոֆի ըրեալ	"	19 1/2
Հինգ ֆրանքի	"	23 1/2
Բամպակ օսկի, Ը. Սէֆի	"	22 1/2
" " Ս. Ս. Ս.	"	22 1/2
Բուշուր	"	32
Սըսը	"	29
Սահմանի	"	83
Հին քսանոց	"	26
" 2 ը մէկ տրակա	"	56
Բուպի	"	10 1/2
Եալուր	"	56
Սահման	"	55
Լոյի (հին)	"	21 1/2
" (նոր)	"	19 1/2
Հինգ տրակա	"	20 1/2

ՅԵՅՏԵՐԵՐՈՒԹԻՒՆ

Ղամբորդներուն, ապրանքներուն, գիրներուն և և. որոնք Լուստրիական Լոյտի ընկերութեան շահե-
նաւով փոխադրուեցան 1841 տարվան մէջ :

Ղամբորդութեան թիւը :	Ղամբորդութեան թիւը :	Ընդամենը	Գիրներուն թիւը :	Պաշտօններուն թիւը :	Դասերու թիւը :	Պաշտօնի կողմէն թիւը :
24 Ղամբորդութիւն (Բրես. և Լոստրիական անդրադարձի մէջ :	10732	3,599,323	89797	22627	37637	5411
15 Ղամբ. Լոստրիական անդրադարձի, Լազարեթում և ուրիշ նաւահանգիստներուն մէջ :	3609	1,340,541	10575	6938	10257	392
158 Ղամբ. (Բրես. և Լոստրիական մէջ :	15640	8,248,823	—	6453	8581	10832
20 Թրես. Գաղմ	3331	868,604	—	1486	2289	2169
35 " Լնդլիայ և ուրիշ տեղանք :	1829	963,163	—	253	680	321
252 Ղամբորդութիւն 1841 ին :	35141	15,020,454	100372	37757	59444	19125
285 " 1840 ին :	38886	12,550,647	91909	35087	53385	21681
53 " աւելի 1841 ին :	—	2,469,807	8468	2670	6059	2556

ԱՐՇԱՆՈՅՍ ԱՐԱՐԱՏԵԱՆ. Ը. Օրագիրը
շարժման անգամ մը կը արգիւցնի :
Տարեկան ստորագրութեան գինը՝ 120 զուրուշէն,
կանխիկ, ով որ ուզէ կրնայ ստորագրուիլ :
Իզմիր՝ օրագրութեան ապարանք :
Պօլիս՝ երկար խանր : Պոմօնանց Վերալի աղային
գրատունը :
Պուրսա՝ Բապաքեան Ս. Կարապետ աղայ-
ցի մարզան :
Երզրանդիտ՝ Երզրանեան Կարապետ աղային մա-
րզան :
Գահրէ՝ Երզրանեան մահապետ Երզրան աղային
գրատունը :
Տրապիզոն՝ Երզրանեան աղայ Երզրան գրատունը :
Թրեսա՝ Երզրան Գրիգոր աղային գրատունը :
Լազարեթ՝ Երզրանեան Երզրան աղային մարզան :
Լնդլիայ՝ Երզրանեան Երզրան աղային մարզան :
Տրապիզոն՝ Երզրան Երզրան աղային մարզան :
Լազարեթ՝ Երզրանեան աղայ երզրան մարզան :
Պաշտօն՝ Լնդլիայ առաջին Թարգման աղայ Խա-
չիկին տունը :
Գալաթի՝ Երզրանեան Վարդանեան աղայ Գա-
լաթի վաճառատունը :
Թէհրան՝ Երզրանեան Թարգման Խանին բնակա-
րանը :
Պոմօնա՝ Երզրան աղայ Երզրան Երզրան և Երզրան-
ոց վաճառատունը :
Սինկափոր ու Պաղատիս՝ Երզրան աղայ Երզրան
եղբարց գրատունը :